Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն

26 սեպտեմբերի 2015 թ.

Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագիր

Վարկ No P148826

Պայմանագիր # TSH-01

Վարդաքարի դպրոցի կառուցում 100 աշակերտի համար

1. *Հայաստանի Հանրապետությունը* Համաշխարհային բանկից *ստացել է* ֆինանսավորում *Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի համար* և մտադիր է միջոցների մի մասն օգտագործել ***"Վարդաքարի դպրոցի կառուցում 100 աշակերտի համար"*** պայմանագրի շրջանակներում վճարումներ իրականացնելու համար:

2. Սյունով Շիրակի մարզի, գ. Վարդաքարի Ծրագրի Իրականացման Կոմիտեն հրավիրում է ներկայացնել կնքված փաթեթներ իրավասու մասնակիցներից՝ Վարդաքարի դպրոցի կառուցման համար: Որակավորման պահանջները ներառում են. ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում հաջողությամբ կատարված **261.000.000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու պայմանագրեր՝ քաղաքացիական շենքերի կառուցման: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **153.000.000** ՀՀ դրամից, կամ մեկ պայմանագիր առնվազն **306.000.000** ՀՀ դրամ, գ/ նվազագույնը **29.000.000** դրամի իրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված "Քաղաքացիական", "Էներգետիկական" և "Հիդրոէներգետիկական" լիցենզիաներ:

3. Մրցույթն իրականացվելու է Ազգային մրցակցային մրցույթի միջոցով, համաձայն Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ «*Ապրանքների, աշխատանքների և ոչ-խորհրդատվական ծառայությունների գնում ՄԶՎԲ փոխառությունների և Համաշխարհային բանկի վարկերի ու դրամաշնորհների փոխառուների կողմից*» Հունվար 2011 թ. վերանայված Հուլիս 2014 թ. «Գնումների ուղեցույցներ»: Բացի այդ, խնդրում ենք ծանոթանալ նաև 1.6 և 1.7 ենթակետերի հետ, որոնք սահմանում են Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման մասով:

4. Շահագարգռված իրավասու մասնակիցները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամից և ուսումնասիրել մրցութային փաստաթղթերը աշխատանքային ժամերին 10.00 – 17.00 հետևյալ հասցեով ք. Երևան, Կ.Ուլնեցու 31, 407 սենյակ, 4-րդ հարկ:

5. Շահագրգիռ իրավասու մասնակիցները մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ Հայերեն լեզվով կարող են ստանալ վերոնշյալ հասցեով՝ վճարելով 3000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար: Վճարումն իրականացվում է բանկային փոխանցումով: Փաստաթղթերը տեղադրված են նաև www.gnumner.am կայքէջում:

6. Հայտերը պետք է ներկայացվեն ստորև նշված հասցեով ամենաուշը **2015 թ-ի հոկտեմբերի 26-ին, ժամը 12:00-ին**: Առաջարկները *չեն կարող* ներկայացվել էլեկտրոնային եղանակով: Ուշացված առաջարկները կմերժվեն: Մրցութային առաջարկները հրապարակայնորեն կբացվեն մրցույթի մասնակիցների նշանակված ներկայացուցիչների, ինչպես նաև բացմանը ներկա գտնվելու բոլոր ցանկացողների ներկայությամբ ստորև նշված հասցեով:

7. Բոլոր առաջարկները պետք է ուղեկցվեն մրցույթի ապահովման հայտարարագրով:

8. Վերոնշյալ հասցեն է՝

Ում. Գալուստ Ավետիսյան

գ. Վարդաքարի Ծրագրի Իրականացման Կոմիտեի նախագահ

Շիրակի մարզ, 3024, գ. Վարդաքար, IV փողոց, տուն 12,

Հեռ: +374 94 608094